



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 3

ՈՒՐԲԱԹ, 4/17 ԴԵԿՏ. 1909

Պայման. — ԴՐԱՍՏԸ՝ տարեկան կանխիկ բաժանորդագրութեան դրութիւն չունի: Միայն հեռաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ գտնուող ազգայիններ՝ ԴՐԱՍՏԸ ստանալու համար ամէն եռամսեան կանխիկ պիտի վճարեն 13 ղրշ.: Այսքան:

Իսկ Պոլսոյ մէջ, ինչպէս նաև Պոլսոյ շրջակայ քաղաքներուն և գիւղերուն մէջ ձեռքէ պիտի ծախուի հատը 40 փր. փափաքողներ, համակրողներ՝ մեր գործակալներու և ցրուիչներու ձեռքէն կանխիկ պիտի առնեն ամէն անգամ մեկ դահեկան վճարելով:

ԴՐԱՍՏին յատուկ մէկ երկու մասնաւոր ցրուիչներ ունինք, մեր ցոյց տուած հասցէներուն թերթ տանելու համար, ի Պոլիս: Առաջին թիւերը ընդունողները երբ չեն ուզեր շարունակ առնել, թող հաճին միւս անգամ անոնց արժէքը տալ և ապա իրենց տրամադրութիւնը յայտնել:

Կանոնաւորապէս բաժանորդագրուիլ ուզողներու հասցէին կրնանք փոսթով ուրոյն թերթ ղրկել. բայց այգպիսիները պէտք է եռամսեայն կանխիկ վճարեն, ուր որ ալ ըլլան:

Մեր գործակալները պարտին ամէն շաբաթ իրենց հասցէին յղուած թերթերուն դրամը անմիջապէս ուղարկել մեզ. երբ երկու շաբաթ դրամական յապաղում տեղի ունենայ, ԴՐԱՍՏին առաքումը իսկոյն կը դադրի:


Դրամները կրնան ղրկուիլ ամէն ատեն, մէկ դահեկան. նոց նամակի փուլերու վերածուելով կամ մանտա փոսթով:

Անոնք որ «Դրախտ»ին կանոնաւորապէս բաժանորդագրուիլ կ'ուզեն նոր տարիէն սկսելու չեն, հապա, «Դրախտ»ին երեւման օրէն, որպէսզի, կանոնաւոր գօլէքսիօն մը չինելու կարող ըլլան ու նիւթերը անջատ չի մնան:

§ Մեր գործակալները հաճին իմաց տալ մեզի թէ, ամէն ատեն որչափ ԴՐԱՍՏ կրնան սպառել:

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո ԻՋԹ Ի Ի Ն Ք

- Ագ-Շեհր — Յակոր էֆ. Եագօեան
 Ամասիա — Հայկազուն էֆ. Թապիպեան
 Այնթապ —
 Ասափազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
 Աֆիօն Գարա-Հիսար —
 Դայսեհի — Կարապետ էֆ. Քէշիչեան
 Դանիրե —
 Դրննըլար — Մակար էֆ. Փափազեան
 Դուրս-Պէլեհ — Անգրանիկ էֆ. Օհանեան
 Դօնիա — Աբրահամ էֆ. Թօսունեան
 Դօնսքանթա — Տեարք եղբարք Մէլէքեան
 Երզնկա — Սարգիս էֆ. Ազնաւորեան
 Եօզլաս — Աւետիս էֆ. Աստուրեան
 Էշմէ — Դաթէոս էֆ. Տօնիկեան
 Էնկիւրիւ — Մարտիրոս էֆ. Սիմիտեան
 Էսիրնէ — Հաճի Կրօն էֆ.
 Թալաս —
 Թօզաք —
 Իզմիր — Կարապետ էֆ. Յարութիւնեան
 Կէյվէ — Պողոս էֆ. Պարոնեան
 Կեօնէն — Յովնաթան էֆ. Յ. Աբամեան
 Մարաւ — Յակոր էֆ. Արբղեան
 Մարսուան — Միհրան էֆ. Տատրեան
 Միջագիւղ — Քերովրէ էֆ. Կարապետեան
 Մեհսին —
 Նիկոմիդիա — Օննիկ էֆ. Էպէեան
 Նիւեօրֆ —
 Չօրում —
 Պանսրմա — Կարապետ էֆ. Դանիէլեան
 Պալքէսեհ —
 Պրուսա — Խարէլէմ էֆ. Սօրանիտիս
 Պարսիզակ — Օննիկ էֆ. Դաւիթեան
 Ռոսոսթօ — Պետրոս էֆ. Մալխասեան
 Սեբասիա —
 Տարսանէլ — Յովհաննէս էֆ. Աճէմեան
 Տէնէֆ-Մասէն —
 Քիլիս —
 Ֆիլասկիֆիա — Յակոր էֆ. Տատրեան



ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
ԿՂԵՐԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Պոլիս, Պապ ր Ալի հասեկի
թիվ 33. Զ. Պերպերեան պարտան

Ձեռքէ կը ծախուի 40 փր.
Հեռաւոր փաղաֆեերու եւ Ար-
սասանմանի համար միայն ե-
ռամսեան 13 դր.

درخت

ارمنیجه و ترکجه رساله موقوفه
سی-اسی، علمی، ادبی و اخلاقی

صاحب امتیاز و مدیر مسئولی

کفهمس دادریان

باب عالی جاده سنده برریان مطبعه سی

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 3

ՈՒՐԲԱԹ, 4/17 ԴԵԿՏ. 1909

ՊՐԱՄԵՔՆ ՊԱՐԲԵՍ

ՊՐԱՄԵՔՆ ՆԵՐՍ

Իրախսէն դուրս փուշեր կան
Սուր, թունալից ու խայթող.
Հոն դեղեւկոտ կ'ընթանան
Ոտքեր տըկար ու գայթող:

Եթէ կ'ուզես վայելի յար
Անփուշ վարդերն գըրախտին,
Պէտք է մըղես գոռ պայքար
Փուշերուն դէմ և բախտին:

Դրրախտէն դուրս կայ քամի,
Կայ փոթորիկ ամպորոտ,
Հոն կը լըքի կարկամի
Ճըղճիմ հոգին վեհերոտ:
Կ'սւգե՞ս վայլել դու անբաւ
Անքոյթ վայրերն դրրախտին,
Պէտք չէ յանձնես կեանքիդ նաւ
Ձեռքը անսուրբ խօլ բախտին:

Դրախտի դուռին պահակեր
Հրեղէն սուսերն կը շողայ
Որ չի մերձին հոն մեղկեր՝
Խեղ հոգիներ անուղղայ:
Կ'անձկա՞ս անոր կաթոգին—
Պարտիս անցնիլ բոցերէ,
Ներս կ'առնեն լոկ վեհ հոգին՝
Կուրծքը պատած խոցերէ:

Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ*

Մարտուան, Անաբոլիս Գօլէն

ԴԱՆԿԻՆ ՄԷՋ ՓՈԹՈՐԻԿ

Պ.

Խաւարամած յարկ մըն էր ուր՝ նաւին անիւներուն տակ
իր վերջին դատակնիքը փնտռող բժիշկը տարեր ձգեր էին,
և այդ վայրը իբր նաւահանգիստ կը ծառայէր կեանքի ան-
ղեկ նաւակներուն:

Ո՞վ էր այս բժիշկը, որ Բասթէօրեան ձեմարանին հա-
րիւրաւոր օտար շրջանաւարտացուններուն մէջ բրօֆէսէօրին
ձեռքէն հիացման դափնին էր խլած, պարզապէս ուղեղի
վրայ ճառող կնճռոտ հարցմամ մը սեկնարանելով, մինչ իր
միւս մրցակիցները կը կակազէին վարանոտ:

Եւ հիացման դափնին ի՞նչ ըլլար աղէկ. չոր խօսք մը
զոր բրօֆէսէօնը շատ լաւ գոյ ըրած էր.

— Ձեմ՝ զարմանար, որովհետեւ Ասիայի մըն է ան:

* Փրօֆ. Գ. Յ. Կիւլեանէ դարձեալ «Առիթ» խորագրով
գոհարիկ բանաստեղծութիւն մը ուրիշ առիթով: Ծ. Խ.

Ո՞վ էր սակայն այդ յոռետես Բժիշկը որ իր ծովային վերջի աղէտքէն յետոյ անբուժելի ախտի մը հնթարկուելով, օր մըն ալ վարիչի մը կը յանձնուէր պոլսերնակ նշանաւոր ախտաբանի մը տիպիկոսքիֆին հնթարկուելու և անոր մէկ ռաբօրը ստանալու համար, և որ իրեն յանձնուած այդ վարիչին միամտութիւնը չարաչար գործածելով, անուշիկ լեզուով մը այս վերջինին ձեռքէն կը խլէր այն թուղթը, — ռաբօրը, ուր իր ցնորունակ ուղեղին վրայ խօսուած էր, ինչպէս նաեւ իր գանկին մէջ յառաջ եկող ուռն ալ մոռցուած չէր նշանակուելու։ Այդ ուռը, ըսի՞ թէ անոր հնչունութիւնը դժպիտ պահալանն էր, օր մը յանկարծահաս կերպով պիտի պայթէր, կարճ ժամանակամիջոցուան մէջ վճռելով անճողոպրելի վախճան մը։

Ծանծաղամիտ վարիչը՝ իր խնամքին յանձնուած այս հիւանդ մարդուն Բժիշկ ըլլալը մոռցած էր պահ մը։ Մարդը հագուստէն կը դատեն, չէ՞։

Ու ռաբօրին ընթերցումը երկաթէ մուրճի մը հարուածը ըրած էր, մէկ կողմէն անոր թաքուն ցաւերն ու շարաւոտ կոտտանքները անգամ մը եւս դարբնելով կեանքի սալին վրայ, միւս կողմէն անոր մէկ քանի վայրաժատին յոյսերն ալ անդամալուծելով։

Բայց ո՞վ էր քառութեան այդ տարօրինակ նոխազը։

Իր այն յիշատակելի օրուան դառնաղէտ երեւոյթը, հըրաշէկ գամի մը ուժգնութիւնով կը ցնցէր էութիւնս, և ես իմ առաջին այցելութիւնս կուտայի իրեն, զինք գտնելով այն ստուերամած յարկին մէջ ուր թահացած չուխայի մը հաստ ու բեատ կապերտներուն մէջ բահուանցուած՝ կը զիկզակէր լպրծուն սալաքարերուն։

Իր կեանքին հարուածներուն ամէնէն աչքառու էջը կը կարդայի, ես հիւսմ իր ճակտին՝ քառասուն և մէկ տարին երբ անփոփոխ դատականները կրող այդ խորշոմնալից աղիւսակին վրայ, ուր պատուումքի հաստ ոլորակ մը քունքին քովէն իջած էր մինչեւ յառաջակարկառ յօնքերուն ծայրը։ Միշտ գլխիկոր, ու ձեռքը ստէպ իր եռաւեան կուրծքին կը տանէր թուղթի մը ճարճատիւնը հանելով, կարծես իր սրտին գաղտնիքներէն մին սանձած ըլլար։ Քաջ գիտէի թէ այցելութիւններս իր ներքին վէրքերը պիտի քերէին,

և ապահովարար ոչ ոք ինծի չափ պիտի յանդգնէր իր հոգեկան սարսուռտ տղամաները ըմբոշխնել, որոնք կեանքի բաժանման վերջի գիշերուան մէջ՝ միմիայն համայնակուլ հողին խորը ներկայացուելու սահմանուած էին, իրենց արհաւիրոտ իմաստասիրութեանն բոլորովին մերկանալնէն հտք:

Իր տրաքեան համբերատար ոգին զարմանք կ'առնէր պարզապէս, ու որչափ որ ան անհաղորդ կը թուէր ինծի, բայց...

Բայց կը խօսէր իր ներկենցաղի քայքայումին, իր անհատականութեան դէմ նիւթուած դաւերուն մասին, որոնց բոլորանուէր ողջակէզը կը դաւանէր իր անձը աւետարանական զուսպ հեղութեամբ, մինչ ինք համակ անձնուրացութիւն մը՝ կարծուածէն շատ աւելի: Եւ հակառակ իր լռակաց ու անհաղորդ բնութեան դէմ զինուած ըլլալու՝ ինք միայն բառ մը, չոր բառ մը կը պտըտցնէր շրթունքներուն ծայրը, զոր թուղթի մը վրայ գրելով իր ետաւական թաւամուղ կուրծքին վրայ պահած էր, ու մերթ ինծի ցոյց կուտար զայն, հոն ես կը կարդայի այդ բառը, ուր հոգեհատորի մը կարօտը միայն կը շեշտուի, չոր բառ մը զոր մայրերն ու հայրերը բերնուց գիտեն—տըղան...

Այցելութիւնս կ'երկրորդէի, կ'երրորդէի, բայց նոյն կրկներգը, նոյն գեղնած, ճմրթկուած թուղթը կը ներկայացնէր ան իր ծոցէն հանելով, ուր տղան, տղան բառերը կը կարդայի սեւեռաբիր աչքերով:

—Այս թուղթին գեղնութիւնը իմ հոգիիս կը նմանի, կ'ըսէր ան, ու ճմրթկածութիւնը իմ ճակտիս այն անգաղտնապահ պատուածքին: Երկու կողմն ալ մուշլ: Բարեկամ, վրայ կը բերէր ան, եթէ ճամբուդ վրայ իմ տըղան տեսնես, ըսէ՛ անոր թէ հայրդ իր վերջին համբոյրին կը կարօտի և թէ խստամբեր ճգնողի մը հոգին իր անձկալից տագնապին մէջ կանխատեսած է այն անգրաշխարհային անարթնական քունը, որուն տակ ապաժաման պիտի փակէ իր գիտութեան համար ոտեղծուած երկու աչքերը:

Ըսին թէ շարաթ մը յետոյ, իր ուղեղին վրայ գտնուող ուռը (փոթորիկ) պայթելով, անշունչ փռուած գտեր են այն լպրծուն սալաքարերուն վրայ, ձեռքին մէջ ճմրթկուած թուղթը բռնած:

Ե.

Երկու տարիներ սահած էին այն օրէն ի վեր, երբ մեռելոցի օր մը գերեզմանատան մը մէջ կը զիկզակէինք մէկ քանի ընկերակիցներով, փափաքեցանք հոգեկան քմահաճոյքով մը, աղքատներու թաղէն հողակոյտ մը օրհնել տալ օրհներգու քահանային, հազիւ թէ օրհներգուն Մաշտոցը բացեր էր, յանկարծ գիտախել երիտասարդ մը ջուրով լեցուն սրուակ մը ի ձեռին՝ խոյացաւ տափակցած հողակոյտին վրայ, և մազերը մէկիկ մէկիկ փեթրտեց, ուսկէց մազի նըրբոտ սեւ թելեր՝ ծուիկ ծուիկ գէպ ի վար տատանեցան, խոլորձայիններու նման կաւապատ հողակոյտին քովտանքը սփռուելով, սրպէս թէ յիտամնաց դամբանախօս կղերի մը սեւ չուրջառին ծերուխտիքները ըլլային:

Հիասթափումը եկաւ զիս սահմուկի մէկէն, կերպով մը հասկցայ թէ այդտեղ Տօքթ. Մսկօֆեանն էր թաղուած, և սեւահեր երիտասարդն ալ անոր տղան էր, ըսին, զոր ոչ մէկ ատեն կրցած էի տեսնել: Փոթորիկ չըկար ա'լիւս: Իրականութեան պէս օգն ալ պայծառ էր: Եղական զուգադիպութիւն:

ՋԱՀՐՈՒՄԱՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԵՐԱՆՔ

Հաւատքը՝ հաստատութիւն, յոյսը՝ հեռատեսութիւն, սէրը՝ միութիւն կը կազմէ:

§ Բարեկրթութիւնն է սր կը սորվեցնէ ամենուն հետ լու վարուիլ:

§ Մարդուն ազատութիւնը անոր հոգւոյն առողջութիւնն է:

§ Ժամանակին լաւ գործածութիւնն՝ մեր երջանկութեան նպաստող գլխաւոր միջոցներէն մէկն է:

§ Երիտասարդութիւնն յոյսով կ'ապրի բայց ծերութիւնն յիշատակով:

§ Երբ առաքինութիւնն կը դադրի, այն ատեն մուլութիւնն կ'սկսի:

§ Գիտունը կը սորվի, իմաստունը կը խորհի, արդարը կ'ապրի:

§ Մարդ՝ կեանքի ամբողջ ընթացքին մէջ երջանկանաւոր կը յաւաս, բայց կը մեռնի առանց այդ նպատակին հասնելու:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԱԶՆ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՖԵՆՏԻ ՓԱՆՈՍԵԱՆ
ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԴ ԻՄ

Ստացած էք անշուշտ « Դրախտ » պարբերականին
Ա., Բ. և Գ. թիւերը :

Շատ առաջ, երբ, ես տակաւին պատանի ուսանող մըն
էի Գասթէմոսիի Ազգ. վարժարանին մէջ, դուք հոն այցե-
լեցիք. ու երբ ժամանակ մը մնալու մտադիր էիք, Հոգա-
բարձութիւնը՝ օգտուելու համար ձեր ներկայութիւնէն,
առաջարկեց գէթ շաբաթը երկու անգամ վարժարան այցե-
լելով մեզի ձրանսերէն դաս աւանդել: Դուք սիրով ընդու-
նեցիք, եւ որչափ որ գիտեմ առանց փոխարինութեան:
Մեր ուսուցիչը Մանուկ Էֆէնտի Սպեան (եւ ապա քահանայ)
մեզի գիտել տուաւ թէ, դուք թէեւ շատ երիտասարդ,
սակայն, քաջ բանաստեղծի համբաւ ունիք, ուստի, թե-
լադրեց որ, առիթը ձեռքէ չհանենք, օգտուինք ձեր տա-
ղաչափութիւնէն եւս, բաներ մը գրելով ու ձեր սիրուն եւ
սահուն գրչին սրբագրութեան տակ ղնելով: Մենք ուսա-
նողներս, ինքնաբերաբար բաներ մը շարեցինք, շարադրե-
ցինք, եւ դուք հաւնեցաք իմ մէկ ոտանաւորիս և սրբադրե-
լով Բուրաստան Մանկանցին յղեցիք ձեր մէկ տեղեկագրա-
կան նամակով, որ սապէս կը վերջանայ ... « եւ աչա-
կերտաց վիճակին վրայ մեր ընթերցողաց գաղափար մը
տալու համար ոտորեւ կը հրատարակենք անոնցմէ միոյն մի
սիրուն ոտանաւորը * , որ թիթեւ սրբագրութիւն մ'է կրած
եւեթ մեր կողմէն » : ԱՂԵՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ »

Ոտանաւորս հրատարակուեցաւ Բուրաստան Մանկանցին
մէջ, Կասու եւ ՇՅԻԿ խորագրին տակ: Ես այն ատեն 13
տարեկան էի :

Թէեւ շատ կարճ եղաւ ձեր դատաւանդութիւնը 'ի Գաս-
թէմոսի, բայց ուսանողներս, այդ կարճ ժամանակամիջոցին՝
շատ ներշնչուեցանք բանաստեղծէդ, եւ այն օրէն բանաս-
տեղծութեան հովեր տռնել սկսանք, սաստիկ տենչ մ'ունե-

* Այդ անդրանիկ ոտանաւորս թերեւս օր մը ղնեմ
« Դրախտին » մէջ :

ցանք դէպ ի ընթերցանութիւն, գրականութիւն եւ դէպ ի տողաչափութիւն: Սոյն անդրանիկ ոտանաւորիս հրատարակումը եւ այն ատենուան վերոյիշեալ ձեր բարեհաճ թելագրիչ խօսքերը մեծ խրախոյս մը եղան ինձ, եւ ահա, այսօր, ձեր այդ աշակերտը յաջողութիւնն կ'ունենայ հրատարակելու «Դրախտ» անուն պարբերական մը: Ինքզինք երջանիկ պիտի սեպէ ձեր աշակերտը, երբ ձեր բարձր հեղինակութիւնով ու օգտաշատ բանաստեղծութիւններով՝ գալ բազմիւ բարեհաճիք «Դրախտ»ին մէջ. հոն միշտ տեղ կայ Ձեզի, եւ ամենափառաւոր տեղ:

Սիրելի վաղեմի ուսուցիչ, ընդունիլ բարեհաճեցէք Ձեր սոսն ամենախոնարհ յարգանքները եւ երախտագիտական զգացմանց առհաւատչեալս:

Ձերդ ԿԴԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Տղայոց Բաժին

ՀՐԱԷՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ

Ձեր աչքերը լսյս, ո՛վ դեռահասներ, պատանիներ և ուսանողներ, այսօր վերջապէս դուք ալ ձեր սիրտին մօտիկն ունիք Դրախտը, ահաւաստիկ ձեր առջեւն ալ գրական լայն ասպարէզ մը կը բացուի, անկեղծաբար կը շնորհաւորեմ ձեզ, և անշուշտ դուք ալ ուրախութեամբ և հրճուամբով զիս պիտի շնորհաւորէք ձեռքի ուժգին սեղմումով կամ մեզի ծանօթ արեւելեան «թէմէնում»ով, ձեզի այս ուրախառիթ աւետիսը հաղորդել փութալուս կամ նոր Դրախտ ստեղծելուս համար: Շնորհակալ եմ պզտիկ բարեկամներս, մեծապէս շնորհակալ: Սակայն և այնպէս, ալ աւելի շնորհակալ կ'ըլլանք ես և թերթիս վարչութիւնը՝ այն պարագային երբ դուք կը հաճիք բաժանորդ գրուիլ կամ գնել շաբաթնակ Դրախտը, օգտուելու համար անոր օգտաշատ պարունակութենէն:

Պարոններ, ձեր իմացականութիւնը և յիշողութեան կարողութիւնը՝ շատ զօրաւոր է, դուք ինչ որ կը լսէք մանկութեան և պատանեկութեան անմեղ օրերուն մէջ, անոնք այնպիսի հաստատ կերպով կը տեղաւորուին ձեր գլխին մէջ որ,

կրնաք զանոնք պահել ու տանիլ մինչև ծերութեան օրերուն, այսպէս անոնք՝ յաւէտ անջնջելի կը մնան ձեր յիշողութեան ու մտքի փեթակին մէջ, եթէ բարի բաներ են, ձեզ կ'առաջնորդեն դէպ ի լաւ, եթէ յոռի՝ դէպ ի չար, թերեւս դէպ ի կորուստ ալ: Մանկական և պատանեկական շրջանը ընդօրինակական շրջան է, ուշադրութիւն. ձեր մատաղ միտքերը պէտք է կանուխէն լեցնէք բարի ազդեցութիւններով, ընտիր ընտիր ձիրքերով և բարոյականի ամէն դասերով, որ պէսզի, երբ մեծնաք կարող ըլլաք Աստուծոյ սղորմութեամբը փորձութեանց դէմ գնելու, մոլութեանց հետ ճակատ առ ճակատ մտքառելու այս չար աշխարհին մէջ:

Կը վստահեցնեմ ձեզ թէ՝ այս հանդէսի սիւնակները պիտի պարունակին ձեր հասակին և ճաշակին համապատասխանող ճոխ նիւթեր և պաշարներ ևս, որոնք՝ ձեր բարոյական լաւագոյն դաստիարակութեան ու նկարագրի կազմութեան պիտի սատարեն. հոն պիտի գտնէք բարոյալից հատընտիր հատուածներ, և նշանաւորներու նշանակալից ասացուածքները, որոնք՝ ձեր իմացական ու մտաւորական զարգացմանը պիտի նպաստեն. հոն պիտի ունկնդրէք զուարճալի և հետաքրքրաշարժ վէպեր և պատմութիւններու, որոնք ձեր յիշողութիւնը պիտի հարստացնեն. հոն պիտի կարգաք ժողովրդական իմաստալից առակներ ու առածներ, որոնք՝ ձեր փափուկ զգացումները պիտի սղնուացնեն. վերջապէս, հոն պիտի հանդիպիք գաւեշտական—բարոյական գրութիւններու և հանելուկներու, որոնք՝ ձեր մատղաշ մտքին յետաններն ըլլալով պիտի սրեն ձեր իմացականութիւնը, և պիտի գոհացնեն ձեզ ըստ ամենայնի: Քիչ չատ գիտեմ ձեր բնական միտումն և հետաքրքրութիւնը, որովհետեւ, ես ալ մանուկ եղայ ժամանակին, ես ալ բոլորեցի վաղ ընդ փոյթ պատանեկութեան երանելի շրջանը: Շատ կ'ախորժիք սիրուն վէպեր և պատմութիւններ լսելէ, ձեր անսկիզ բնաւորութեան մէջ այդ մարմնով կայ արգէն, և երբեմն գիտեմ, մի՛ պահէք, ցաւ ի սիրտ կ'ըսեմ թէ ի՞նչ անպիտան և անչա՛հ պատմութիւններ լսեցիք հոսկէ, հոնկէ, որոնք վեր ի վայր չըլեցին ձեր փափուկ ու մաքուր զգացումները, արատաւորեցին ձեր անսկզունակ սիրտերը, քանզի սպառնացան և քանդեցին ալ ձեռնէ ոմանց բարոյական

չէնքը: Դժբաղդարար, քանի՞ քանի՞ խեղճ ու կրակ երիտա-
սարգների կան ձեր շուրջ հիմա, որոնք անհաճոյ և աղտոտ
խօսքեր ունկնդրելով և կամ մանաւանդ անբարոյական պատ-
մութիւններու ընթերցման յոռի ազդեցութենէն քշուելով
բարոյապէս ու ֆիզիքապէս ինկած ու քայքայուած են:

Անտարակոյս դուք չէք ուզիր անոնց նմանող ըլլալ,
Աստուած մի՛ արասցէ, ուրեմն, փնտռեցէք միշտ ձեզի օգ-
տակար նիւթեր ու կենսաբաշխ հիւթեր, և ահա, այս լրա-
գրին միակ նպատակն է զայն հայթայթել ձեզի համար, հա-
ւատացէք այսպէս ըլլալուն և ուստի մեծագոյն ընդունելու-
թիւնը և խրախօյսը ձեռնէ կ'ակնկալուի, կարգացէ՛ք, ուրիշ-
ներուն ալ կարգալ տուէք, սորվեցէ՛ք, ուրիշներուն ալ
պատմեցէք: Ձեր նախասիրած նիւթերը կամ պատմութիւն-
ները երբ Հայերէն մասին մէջ չէք գտներ, գիմեցէք Տաճ-
կերէնին. երբ Տաճկերէնին մէջ չէք հանդիպիր, այն ատեն
ալ Հայերէնին դարձէք:

Գիտէ՞ք, Եւրոպայի մէջ որքան թերթեր կան միմիայն
տղայոց յատկացուած, բայց հոն ընթերցասէր ուշիմ պատա-
նիկներու լեզէսներ կան, ինչո՞ւ չը հետեւիք անոնց, բայց
տիտուր իրողութիւն մըն է խոստովանելը թէ, մեր մեծերը
չեն կարգար արգէն՝ ո՛ւր կը մնան պզտիկները. թերեւս
հայրերը պիտի առարկին նաեւ որ իրենց պիտաճէն չի ներեր
կամ ժամանակ չունին ընտելութեան ընթերցանութեամբ զբաղելու,
բացարձակապէս անճիշդ և անտեղի են այսօրինակ բոլոր
դիտողութիւնները, որովհետեւ, իրենց ուրիշ քմահաճոյքնե-
րուն յագուրդ տալու համար, ինչպէս ակոյն, ծխախոտին
և այլնի յումպէտս կրնան գրամ վատնել, կամ ժա-
մերով կրնան ժամավաճառ ըլլալ սրճարաններու ապականած
մթնոլորտին մէջ, բայց այդ մտաւած դրամներուն տաճառ-
պատիկին մէկ մասն մինչեւ անգամ յօժար չեն յատկացնելու
նոյն իսկ իրենց կամ իրեններուն ֆիզիքական, մտաւորական
և բարոյական օգտին:

ԴՐԱՆՈՑԻՆ ՎԷՐ

ԼԵՅՏԻ ԻԶՍՊԵԼ

Արդարեւ ճշմարիտ Անդլիացի աղջկան մը պէս մեծ-
ցուցուած է, իր մայրը յանցանք մը չէ ըրած՝ եթէ ոչ

փախուստ մը, որով ամուսնութիւննիս կնքուած էր, հրեշտակի պէս կին մըն էր, և անոր կրթութեան տակ տասներկու տարիներ մնալէն հետք կարող և կատարեալ ուսուցչուհիի մը մը հովանւոյն տակ ալ մնացած է: Ինչեւիցէ, մեր գործին դառնանք, Իսթլինը եթէ գնել կուզէք՝ գաղտնի կերպով ըլլալու է, անոր գրաւի դրուած պարտքերն ալ վճարուելէ հետք մնացածն ալ ինծի, յաչո ժողովուրդեան՝ Իսթլինի տէրը դարձեալ Լորտ Մաունթ Սէվըրն ըլլալու է, եթէ պարտապահանջները իմանալով ինծի դրամ մը իսկ չի ձգեն, կը հաւնիս ատոր»:

Մր. Գարլայլ քիչ մը մտածելէն հետք հաւանեցաւ եւ հետեւեալ առտուն փոխանորդներուն հետ տեսակցելով հարկ եղած կարգադրութիւնը ընել սրոյնց, ոտքի ելլելուն՝ Լորտը «Մի՛ երթաք, հոս կեցէք միասին ճաշէք» ըսաւ: Գարլայլ, վարանոտ՝ իր զգեստին նայած ատեն (որովհետեւ սովորական ճաքէթ մը հագած ըլլալուն Լորտի մը սեղանին մասնակցելու ՚ի վիճակի չէր) Լորտը իր միտքն հառկցաւ (հոգ չէ, մենք մեզի պիտի ըլլանք մէյ մըն ալ աղջիկս, շնորհ ըրէք սա ազդարար զանգակին մատնահարելու» ըսաւ:

Գարլայլ այդպէս ըրաւ և ծառան գալով Լորտին կողմէ ազդարարուեցաւ ճաշի պատրաստութեան: Զաշը ժամը 7ին պատրաստ ըլլալով, Լորտը անուաւոր (մագարալը) աթոռին հետ ճաշասրահը փոխադրուեցաւ: Ատոնք դռնէն ներս մլա-նեղնուն՝ միւս դռնէն ուրիշ մը կը մտնէր: Գարլայլ աչքերը յիշխալին սեւեռեց: Ներս մտնողը նազեղաճեմ, գեղեցկիւրան, աղւոր աղջիկ մըն էր որուն նմանը միայն երեւելի նկարիչ-ներու պատկերներուն մէջ տեսած ունէր: Սեւ, գեղեցիկ մազերուն խոպանները ուսերուն վրայ սփռուած՝ իր մարմինը արժէքաւոր ճերմակ ժանեակներով շինուած զգեստի մը մէջ քահուանդուած, իր փափուկ թիւերը՝ մարգարտազարդ, ուրիշ աշխարհէ մը եկած հրեշտակի նման մէկն էր:

«Աղջիկս Լէյուի Իգապէլ, Մր. Գարլայլ» ներկայացուց Լորտը և ինք սեղանին գլուխը անցնելով միւս երկուքը երկու կողմերը նստեցան: Մր. Գարլայլ թէեւ կանացի գեղեցկութիւններէ գրաւուող մը չէր, սակայն այս անգամ զիմացը նստող աղջկան գեղեցկութիւնը իր վրայ արտասովոր ներգործում մը ձգել սկսաւ: Ուղղակի իր սրտին վրայ ազդողը՝

ոչ աղջկան այն համաչափ մարմինն էր, ոչ այն փափուկ աղուորիկ այտերուն վարդանման կարմրութիւնը, և ոչ ալ մազերուն սեւութիւնը և սուսութիւնը, այլ միայն անոր անուշ, սեւ աչքերուն քնքշութիւնը, որուն նմանը կեանքին՝ մէջ տեսած չէր: Իր աչքերը աղջկան վրայէն վերջապէս չէր կրնար զատել, և նայելով նայելով անոր աչքերուն մէջ կարգաց տխրութեան տրամադրութիւն մը: Բայց Մր. Գարլայլ սնտարակոյս չէր կրնար ըմբռնել թէ Լէյտի Իզապէլի նման կին մը ինչո՞ւ թախծութիւն ունենար:

«Ի՞նչ չուտ հագուեր ես Իզապէլ» ըսաւ Լորտ:

«Ծերունի Միսիս Վէյնիին սպասել չուզեցի, հիմակուրէն հագուեցայ. գիտէք այս իրիկուն թէյը հոն պիտի խըմենք» ըսաւ Իզապէլ:

«Կը յուսամ շատ ուշ չէք մնար»

«Ան ալ Միսիս Վէյնի գիտնալիք բանն է, հայր»

«Եթէ այդպէս է, անկասկած ուշ պիտի մնաք, այս միջոցներուս կիները՝ գիշերը ցորեկի կը փոխեն, բայց այտերնուն վարդերը կը թռչնին լուր չունին» ըսաւ Լորտ:

Ճաշին աւարտութիւն Իզապէլ՝ «Մնաս բարով, հայրիկ» ըսելով իր ճակատը մօտեցուց և Լորտը ատկից համբուրելով «Աղջիկ», Միսիս Վէյնի ըսէ որ կէս գիշերին չմնաք, դուն մէկհատիկ աղջիկս ես, զքեզ կորսնցնելն իմ գործիս չի գար» ըսաւ, ու Գարլայլին՝ համակրանքով «Հաճեցէք զանգակիկը զարնել, ոտքս կը ցաւի, աղջիկս մինչեւ կառք չպիտի կըրնամ տանիլ. ծառային յանձնարարեմ» ըսած պահուն Գարլայլ շիկնեցաւ, և զգուշաւոր «Ձեր Լորտութիւնը եթէ թոյլատրէ և եթէ Լէյտի Իզապէլ ներողամիտ ըլլայ՝ մինչեւ կառքը ընկերանալու փառքին արժանի կ'ըլլամ» ըսաւ:

Լորտը «Ուրախ կ'ըլլանք» աւելցնելով, Գարլայլ աղջկան ժպիտին վրայ մինչեւ կառքը գնաց զայն տեղաւորեց, և կառքը անհետացաւ: Գարլայլի վերադարձին, Լորտը խօսակցութեան սկսաւ. «Կը տեսնէ՞ք Մր. Գարլայլ, աղջիկս սալոնակոն կեանքին նոր սկսաւ և ամէն անգամ գացած սալոնին մէջ մեծ տպաւորութիւն մը կը ձգէ: Աղուորութեան չափ ալ սրտի տէր է»:

Լորտը չափազանցութիւն չէր ընիր, աղջիկը արգէն հաւստ և ազնիւ սրտի տէր էր, նմանը շատ տեսնուած աղ-

ջիկներուն պէս ինք ոչ նորածեւութեանց հետամուտ եղած էր և ոչ թեթեւաւիկութեանց կենթակայ, որովհետեւ իր մօրը կենդանութեանը՝ իր կեանքին մեծ մասը Ուէյլի հօրը բնակարանին մէջ անցուցած և մօրը մահէն ետք մեծ քաղաքներու և սալօններու կեանքին չէր թեւաւորած, միայն լաւ ուսուցչուհիի մը հովանիին տակ՝ Մասնի Սէվըրնի բնակարանին մէջ անցուցած էր իր կեանքը։ Առատածեւուն, ազնիւ, սիրուն, քնքշիկ և ամէնուն հանդէպ յարգալից աղջնակ մըն էր։ Վերջապէս ո՞վ ընթերցող հիմա անոր համար ամէն գովեստ, յարգանք և սէր մի՞ խնայեր, որովհետեւ ատեն պիտի գայ որ այդպէս պիտի չկրնաս ընել... եթէ անոր ապագան հայրը կանխատեսած ըլլար, իր սէրէն շարժեալ կը զարնէր կը մեռցնէր, մէջտեղէն կը վերցնէր, առանց թողլու որ անիկայ այդ վիճակներուն ենթարկուի։



ՅԱՄՆ ՆԱՌԱՋԻՆ

ԵՆԹԱԿԱՅԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Գ Լ Ո Ւ Ն Ա .

ՄԵԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՄ ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՍ

Ի Ն ՉԷ՞Ն ԵՒ ԵՐ՞Բ ԶԱՌԱՋ ԳԱՂԸ



Լալով կը ծնիցի, տառապելով կ'ապրիցի, հառաչելով կը մեռիցի,
Մեր օրերը յառաջընթաց փայլերն են
կեանքի վերջակէտին։

ԴԺԲԱՆՏԱԲԱՐ շատ կանուխէն ինկայ այս չարատանջ հիւանդութեան անագորոյն ճիրաններուն մէջ։ Դեռ հազիւ կ'ողջունէի երիտաւարութեան առաջին գարունները, եւ ահա անոր գեղափոխութիւն ծաղիկները թռչնիլ, թառամիլ սկսան

շուտափայլթ, մուսլլամած դաժան ամպեր հկան իրենց սևա-
քօղ վարագոյրովը քօղածածկել իմ առողջական երջանկու-
թեանս պայծառ երկնակամարը: Ի՞նչու այսպէս ակամայ
տխուր սկսայ պատմութիւնս, չէի ուզեր գրիչս այս կերպ
շարժել: Ան ալ փայթ չէ, որովհետեւ, ընթերցողներս գի-
տեն թէ, վերջապէս ենթարկուող մըն է որ կը հիւսէ այս
մեղամաղձիկ տողերը: Շարունակենք:

Լուսահոգի հայրս, միջակ դասակարգէն պարզ արհեստա-
ւոր մըն էր. 35-40 տարի առաջ երկու անգամ Պոլիս գա-
լով՝ ժամանակ մը Ազգային հիւանդանոցին մէջ պաշտօնա-
վարած ու այն ատեն ուսման աւագ կարեւորութիւնն ըմ-
բռնած էր, այնուհետեւ իր միակ տենչը՝ իր զաւակներուն
լաւագոյն կրթութիւն մը ջամբել եղած է, որուն համար
ջանք եւ դրամ չէր խնայած:

Չորս եղբայր եւ երկու քոյր ենք: Ես երկրորդն եմ:
Ի մանկութենէ կը յաճախէինք վարժարան: Տասն եւ մէկ
հասակին մէջ իսկ կարգալու մարմաջէն բռնուելով, բուռն
եռանդ մը սկսաւ արծարծիլ իմ մէջս: Մեր տան գետնա-
յարկին վրայ կիսախաւար ու անարեւ սենեակ մը ունէինք,
այդ անչուք սենեակը առանձնանալով օրն ի բուն, գիշերն
ի բուն դաս կը սերտէի, գիշերներ լուսցուցած էի հոն,
առանց վայրկեան մը իսկ աչքերս գոցած ըլլալու, թէ աչ-
խատելու եւ թէ գրեթէ ամեն բանի մէջ քիչ մը յանդուգն
էի, կուգէի որ սկսած գործս գլուխ հանէի յամառարար:
առանց նկատի առնելու հասակ եւ կարողութիւնս: Տասն եւ
երկու տարեկան էի երբ տաղաչափութեան սկսայ, ճգնելով,
աքնելով ոտանաւոր կը գրէի, եւ այսպէս բանաստեղծու-
թեան հովեր ալ կ'առնէի շատ կանուխէն, ո՛վ գիտէ թերեւս
այդ ընդունակութեամբ ծնած էի. երկու տնդրանիկ ոտա-
նաւորներս «Բուրաստան Մանկանց» ու «Բիւրակն»ի մէջ հրա-
տարակուեցան: Անգիտակից ինքնախորտակումիս, աններելի
չափազանցութիւններ կ'ընէի, եւ այս պարագան՝ եթէ ոչ
հիմնական պատճառը՝ գէթ յառաջարանը ու նախաշաւիղը
կրնար ըլլալ հիւանդութեանս: Չմոռնամ սակայն նախ եւ
առաջ յայտարարելու թէ, հիւանդութիւնս ժառանգական
չէր. որովհետեւ միւս եղբայրներս եւ քոյրերս շատ քաջա-
ռողջ են, ու ամէնքն ալ ամուսնացած ու զաւակներու տէր

եղած լեթէ հայրս ունեցած ըլլար այսպիսի հիւանդութիւն մը , բնականաբար վերջէն ծնող տղաքները անով պիտի վարակուէին , մինչդեռ նշոյլն անգամ չկայ անոնց վրայ : Հայրս եւ մայրս արեւահարի հիւանդութեամբ մեռան : Բիշ մը պարզեմ : Մեր տունը առ ժամանակեայ կերպով փոխադրուած էր Ալանա ըսուած գիւղաքաղաքը 1887ին . ամառուան սոթագին օրերն էին , հոն ամէնքս ալ արեւահար եղանք , թիֆօյէ բռնուեցանք , որուն պատճառն էր Ալանայի շուրջ ճախճախուտ տեղերու գոյութիւնը : Անմիջապէս Եօզղատ փոխադրուեցանք : Բժիշկներ ոգի ի բռին աշխատեցան , բայց մայրս մեռաւ 21 օրէն . մենք հետզհետէ աղէկցանք , միայն հայրս սյդ արեւահարի կամ թիֆօյի հիւանդութեան ուրիշ հետեւանքերուն պատճառու մեռաւ երկու տարի վերջ , որ ատեն բժիշկը հաւաստեց թէ , կուրծքն ալ վնասուած էր :

Երբ տասն եւ օթը տարեկան էի , տեղային բարձրագոյն վարժարանէ մը շրջանուարտ եղայ ծննդավայրիս մէջ : Օգնական դասատուութիւն ըրի մօտաւորապէս երկու տարի : Այս ժամանակամիջոցին մէջ էր որ իսկ եւ իսկ հիւանդութեան մը գոյութիւնը սկսաւ ծայր տալ : Գիշերները անկողին մօտ ձառններու բազուկներուն մէջ պզտիկ ցաւ մը կ'զգայի , կարծես թեւերս ջախջախուած էին , անցօր կը մնային , եւ ասիկա բարեբաղդաբար մէկ քանի վայրկեան միայն կը տեւէր , աղէկ մը վերմակին կը փաթթուէի , կը տաքնայի , կը քրտնէի եւ կ'անցնէր , ահա ասիկա տխուր սկզբնաւորութիւն մը եղաւ իմ ապագայ անողոք հիւանդութեան : Եօզացաւ մըն էր առիկա , թէ մկանտցաւ կամ ջղային տկարութիւն , չէի կրնար զանազանել : Ինչ մեղքս պահեմ , այդպիսի անկարեւոր ցաւի մը հանդէպ անփոյթ գտնուեցայ , չգիտցայ թէ պզտիկ գանցառութիւններ շատ անգամ մարդը կ'առաջնորդեն արհաւիրտ մահացու ախտերու :

Տասն եւ ինը տարեկանիս մէջ դասատուութեան պաշտօնով Սուհողուրու խրկուեցայ , առաջին անգամն էր որ պանդխտութեան կ'ելլէի : Պարծս ծանր էր . 70 երկսեռ աշակերտներ կային իմ հոկոցութեանս տակ : Զարմանալի զուգադիպութեամբ հոն տարբեր վարժարանի մը մէջ դաստիարակուելու եկած էր հայրենակից ուրիշ երիտասարդ մը , սգրացեալ Ալիքսան էֆ . Բիւրքճեան :

Միւթեվեֆօա մուսլիմ Ալիքսան լեֆ. Քիւրքնեանքն զիւրի
ճեմիի իշխն

Մ Է Ր Ս Ի Յ Է

Տճէլէ էտիպ գափլատը իլլէթ,
Հէնուզ կէնճ իքէն չէքտին չօզ միհնէթ,
Պու նէվ հոյաթտան էյլէյիպ նէֆրէթ,
Էճէլտէ գարար գըլտըն ագըպէթ:

Լազըմ մը պունճա ընճիտէ զահմէթ,
Պու գատար էլէմ նէտէն իճապէթ,
Պու հօլտա էթտին պին պիր շիքնայէթ,
Լաքին օլմատը չարէ, քէֆարէթ:

Դպրազ էթտին չօզ զայրէթ, համիյէթ,
Վար իտի սէնտէ ազլ ու տիրայէթ,
Յագաթ չի չարէ չէքտին զարուրէթ,
Հիսսէն օլտու տէրտ, ճէֆա, մէրարէթ:

Խէսպ էթմէք իշխն իրֆան ու հիքմէթ,
Իհրազ էթմէլէ շէօհրէթ, մարիֆէթ,
Էսիրկէմէտին պիր կէօնէ խըտմէթ,
Թա՛ քի զայ էթտին գուզվէթ ու սըհհէթ:

Աէնտէքի զայրէթ, ճիտտի կէրմիյէթ,
Լայըզ տըր օլտա շահանը իպրէթ,
Իլմ ու թալիմէ վէրտին թագվիյէթ,
Պիլտին քի պունտա տըր հէր մէզիյէթ:

Տիլէ, ահպապ, վաթան, մէմլէքէթ,
Թէրք էտիպ չըգմագ ա՛զ մը ֆէլաքէթ,
Պիր տէ պուլայըմ պիր տէվա, նուսրէթ,
Տէրքէն պըրագտըն ճիւմլէսին հասրէթ:

Շէվանէվ զահմէթ, արգասընտան մէվթ,
Տիւնտանըն հալի պունտան իպարէթ,
Վաթանտաշ սօսթուն էյլէյիպ նիյէթ,
Օգուտու ճանտան՝ ճանընա րահմէթ:

* * *

Գարա խապերի ալըպ վալիտէն,
Թա մէզարընա կէլտի սէրիէն
Վաֆիր կէօզ հաշը տէօքիւպ եէնիտէն,
Այրըլամատը սէնտէն էպէտէն:

Մէզար պաշընտա տուրըպ տա հէման,
Ֆէրեատ ու ֆիզան էթտիյի գէման,
Իպրազ օլունան մուհապպէք, իման,
Տէփրէֆմէսի մի սէնի մեզարսան:

ԹԱԼԻՄ Ի ԱԹՅԱԼ

Ֆիքրին զայէթլէ ֆաիլ պուլընտըը, էն նազիք վէ սիւրէքլի թէ'սիրաթըն իճրա օլունտըը, ախլազ ու էվսաֆ պինասընըն մէթին թէմէլլէրինին գօնուլտըը միւտտէթ ի հայաթը ինսանիյէ, օն հաշընա գատար օլան տէվր ի հայաթ տըր: Ճէնապ ը Հազգըն թէրթիպաթ ը աճիպէսի իգթիզա-սընճա՝ իշպու միւտտէթտէ չօգ միւստիտ վազթ պուլընուպ, ինսան հուզուր ը գալպէ վէ ասայիշ ի հալէ մալիք տիր: Ֆիքրին հագիգաթա սուսամըշ օլան վէ գալպին հէփ էյի թէ'սիրլէրտէն զայէթլէ միւթէէսսիր պուլունտոն չօճուզըղըն գըյմէթլի սէնէլլէրի՝ միւսթագպէլտէ իսթիգատէթ, սէլտմէթ վէ սէ'ատէթլէ իմրար ը էօմը էյլէմէսի գըմնընտա չօճուզը թա'լիմ իշիւն Ալլահ թարաֆընտան մուայէն վազթ տըր: Պու միւտտէթ՝ գալպտէ հագիգաթ թօխամլտըընը էքէճէք, վիճտանընը թէհգիպ վէ թէրպիյէ էաէճէք, վէ էօլմէզ ճանըն մէմտուհ վէ մէրտուտ 'ամէլլէրինի վազիհէն թէֆրիգ իլէ ի-ման վէ իթա'աթ թարիգինէ սիւլիւք էտէճէյի զիգըյմէթ միւտտէթ տիր: Էօմրիւն իշպու իլք օն սէնէլլիք միւտտէթինի, հ'անի հէնուզ ինսանըն վազթ ու ազըընը իշպալ էտէ-ճէք պիր շէյ պուլընմատըըը զէմանը՝ Ճէնապ ը Հազգ չօ-ճուզըընըն վալիտէյն թարաֆընտան թա'լիմ ու թէրպիյէ էտիլմէլլէրինէ ախլազ վէ տինին իլք մէպտէլլէրինի թահալէ թային ու թախտի պուլընմուշ տըր: Ալ էլ խուսուս պու միւտտէթ՝ վալիտէնին զայէթ նուֆուզը օլտըը, հ'անի չօ-ճուզընըն լէվհա ի ֆիքր ու գալպի իւզէրինէ սօնրա տալա

պօղուլմայաճագ օլան հագիգաթլարը հագմաղա ֆուրսաթ-
հապ պուլլնտըղը միւտտէթ տիր: Ալլահա 'արզը 'ուպու-
տիյէթ, իրատէթ՝ Ուլլահա թէսլիմիյէթ, նիզամ ու գանունա
թէպալիյէթ, հագգ ու 'տտալէթ մէպտէլէրինէ քէմալը ինգը-
յաոտ, պէօլիւքլէրէ հիւրմէթ վէ իթաաթ վէ քիւչիւքլէրէ հիւ-
նի 'իպրէթ՝ ֆէրա'իզ ի 'ազիմէսի՝ աթֆալ վէ թալէպէկեանա
էօյրէտիլէճէք էն 'ալա վէ մուգթազի տէրսլէր օլուպ, իշպու
էսասի հագիգաթլարը չօճուգլարա թ'ալիմ էթմէք իչիւն՝
վալիտէյն վէ խաճէկեան մին թարաֆիլլահ թ'ալին օլուն-
մուշ վասիլէր վէ համիլէր մագամընտա տըրլար: Ճէմիյէթ ի
պէշէրիյէյի միւգթաթիպ վէ միւգմէհիլլ գըլան հալաթը մու-
գիւրէտէնէ էքսէրիսի, էլիէվմ մէվճուտ օլան ֆըսգ ու ֆիւ-
ճուրըն չօղը, վէ ինսանլարըն խամ խայալ վէ քեազիպ ֆիւքը-
լէրի, չօճուգլարըն հէնուգ թաղէ չաղլարընտա իքէն 'ալիւ-
լէր վէ մէքթէպլէր տէրունինտէ մաթլուպա մուվաֆըգ վէ
տօղրու սուրէթտէ թ'ալիմ ու թէրպիյէ օլունմամալարընտան
նէ՝ չէթ էթմիշ վէ էթմէքտէ տիր: Մէմալիքիմիզին սա'ա-
տէթ վէ մա'մուրիյէթի՝ էվլատլարըմըղըն օն հաշընա գատար
օլան միւտտէթ ի 'էօմիլէրինտէ՝ էյի թ'ալիմ ու թէրպիյէ
կէօրմէլէրինէ վապէսթէ տիր:

*
* * *

Չօճուղը՝ տօղմագտան էթմէլի թ'ալիմ,
Ե'անի, էպէվէյնի օլմալը 'ալիմ:

Չօճուղըն իւք խաճէսի վալիտէ:

Պաշգալար գալըրլար չօգ կէրիտէ:

Չօճուղըն պաշը՝ հիչ պօշ տուրամազ,

էթմէլի հէր տէմ՝ տըգգաթ, իհթիրազ,

Ֆիքրինէ գօյմազ իսէն խօշ շէյլէր,

Քէնտիլիյինտէն կիրէր պօշ շէյլէր:

ՉՈՃՈՒԳԼԱՐ ՀԱԳԳԸՆՏԱ ԷՖԲԵԱՐ Ը ՄԻԻԹԷՆԷՎՎԻԷ

Հէր քիմ չօճուգ կիպի միւթէվազը օլուրսա, մէլէքիւթ
իւս սէմալաթտա էն պէօլիւք օ տըր: Հագրէթի իսա

Չօճուղը եօլընըն իպթիտաաընտա թ'ալիմ էյլէ, վէ իս-
թիլար օլտըղը գէման պիլէ անտէն սափմայաճագ տըր:

Սուլթան Սիւլէյման

Զօճուգ՝ էօմրիւնիւն իւք պէշ սէնէսիւնի պէնիւմ հանըմտա
կէշիրսին, պէն անը մէլէքտէ հափապիւրիւմ, չէյթանտա:

Պիր գաթօյիք փափասը

Ախլաւ ու էվսաֆըմըն նէշվ ու նէմա վէ թէրազգիսինի
մահգա վալիտէմին հիւսն ի թէ'սիրինէ համլ էտէրիւմ:

Տը Մէսթըր

Զօճուգ՝ ատէմին, 'աիլէնին, միլլէթին, վաթանըն վէ
տիւնհանըն փէտէրի տիր:

Պիր ալիւմ

Եէտի սէքիզ հաշընտաքի չօճուգլարըն 12-13 հաշընտա-
քիլէրտէն զիյատէ թ'ալիւմ ու թէրպիլէյէ միւսթաիտ օլմա-
լարը միւսթէսնա պիր չէյ տէյիլ տիր:

Տը. Թ. Լ. Գալլըր

Տիւնհատա պիր փէտէրին պըրազաճաղը էն պէօյիւք
միրաս՝ հագիգի թ'ալիւմ ու թէրպիլէ իլէ միւթթասըֆ պիր
էվլատ տըր:

Թուվաս Սֆօր

Պիր չօճուգ գապուլ էթտիլի թ'ալիւմ ու թէրպիլէյէ
կէօրէ՝ էպէվէյնինէ հա պատի ի սէֆա վէ հա պաիւ ի ճէֆա
օլուր:

Պիր ալիւմ

Զօճուգըն ագլպալիզտէն զիյատէ թազիւմ ու թէքրիմէ
չայէսթէ օլտըղընը հիսս էտէրիւմ:

Կարֆիլս

Զօճուգլարա ֆէվզ էլ ատէ հիւրմէթ էտիպ անլէրին հու-
զուրընտա քէնտիմէ չէքէտիւզէն վէրիւրիւմ, չիւնքի միյա-
նէլէրինտէ տիւնհայը հայրան վէ լէրզան գըլաճագ սահիպ ի
իգթիտար գէվաթը սիթատէսիմաթըն պուլունմասը միւհ-
թէմէլ տիր:

Մարթին Լուքերին մուալլիմի

Զօճուգը թանըմանը իչիւն, փէտէրինէ տըգգաթ էտի-
նիզ, փէտէրինի պիլմէք իսթէրսէնիզ չօճուգընա նազար էյ-
լէյինիզ:

Չիմնէ պիր մեսէլ

Էկէր մէմուրիլէթի ըսհանիլէմէ պի թէքրար պաշլա-
մազըղըմ միւսթին օլտա իտի, չօճուգլարա տահա զիյատէ
տըգգաթ ու իյթինա էտէճէք իտիւմ:

Պաս. Տը. Աւպէլ Կրին

Միւմինլէրին սայըր չօճուգըղգտա էտիլէն թ'ալիւմ իլէ՝
պէօյիւքլէրին թէվպէյէ կէլմէսիլլէ օլտըղընտան պին տէֆա
զիյատէ արթար:

Տը. Ճ. Կ. Հօլանս

Թէվպէ իչիւն պէօյիւքլէրէ պիր տէֆա՝ վէրիլտիլի հալ-
տէ, չօճուգլարա վէ կէնճլէրէ իքի տէֆա՝ վազ վէրիլէճէք
օլան վազթլար կէլմէք իւզրէ տիր:

Փիսգօպօս ճիյնգ

Ուզուին միւստէթ հաշայարագ քէսպ իթտիյիմ թէճրիպէ
իլէ շու գաթի՝ նէթիճէյէ կէլմիշիմ քի, էկէր պիր տէֆա
տահա հաշամաղա միւզթէտիր օլտա իտիմ, հիմայէմէ իհալէ
օլունան չօճուզլարա էտէկէլտիյիմտէն օն գաթ զիյատէ տըզ-
գաթ էտէճէք իտիմ:

Տր. Սամուէլ Միլըր

Չօճուզլարըն իսլահ վէ իսթիզֆարընա պէօյիւքլէրին-
քինտէն զիյատէ էհէմիյէթ վէրիլէճէյի վազթըն հազլաշ-
տըղընը կէօրմէք պէնիմ իշիւն մուճիպ ի մահուզիյէթ տիր:
Փիսգօպօս Սիմփսըն

Վաթանըն միւսթագպէլ հայաթընը թէշքիլ էտէն աթ-
ֆալըն իլք մէքթէպի վալիտէ աղուշը տըր: իլք թալիմ ու
թէրպիյէ վէ միւմարէտէ պէշիքտէն պէտ էտէր:

(Չեզար վէ Նափոյիօն)

Մ Է Զ Ա Ր Թ Ա Ր Ի Խ Լ Է Ր Ի

Ազըպէթ սէնտէ կէլիրսին, իշպու սուրէթին պաշընա,
Հազրէթ ի Ատէմ միսիլլիւ կիրսէն հէզարան հաշընա:
Պու տրւնհա պագը տէյիլ տիր, շէօյլէճէ պիր զըլըլ խայալ,
Սագըն ալտանըպ էյ ատէմ, օլմայասըն ասլա մէյյալ:
Ֆանի տրւնհա նէլէ՛ր կէօրտիւ, նէլէ՛ր օլտու քիւնֆէքիւն,
Նէ՛ սէրվէթլէր, նէ՛ գուտրէթլէր օլմատը հիշ պագը չիւն
է՛յ ազիզիմ, պու ֆանիտէ իսթէրտէր օլ էֆլաթուն
Զիշարէ տիր, պիր կիւն տէ սէն օլուրսուն լա՛ալէմ պու:
Պու կիւն պիզ թօիրաղըն իւզէրինտէ իզ,
Եարըն թօֆրագ պիզիմ իւզէրիմիզտէ:
Տիւն պէն՝ սէն կիպի իտիմ,
Եարըն սէն՝ պէն կիպի օլաճագըն:

ՄԱՅՄՈՒՆԸ ՏԻՃՃԻՆԻՆ ՍԵՐՎԻԻԶԵԾԹԻ

Միւթէսարընֆ փաշանըն տիշինէ պագմագ իւզրէ (Ալ-
լահ վէրտի տէ տիշի աղըրտը) պիր գաշ տէֆալար հապսխա-
նէտէն չըգարըըպ խանէսինէ կէօթիւրիւտիւմ, սօն տէֆա
տըլարը չըգմաղա թէքրար միւսաատէ էտիլտիյինտէ պու
քէրրէ շէյթան շէրինէ ույուպ ֆիրար էթտիմ, կիտիպ պէնի
թանըյան պիր սատըզ էրմէնի էվինէ իլթիւմ էթտիմ իսէ-

տէ, օրատա գալմագլըղմ հէմ պէնիմ վէ հէմ էվ սահրպլէրի օլան էրմէնիլէր իչիւն թէհլիքէլի օլաճաղընտան օնըն տա պիր չարէսինի պուլտում, չաթըտան չաթըյա հանընտաքի թիւրք էվինէ աշը վէրտիմ, օրատա մէֆնունիյէթլէ գապուլ օլունուպ սաղ օլտունլար էվհէր ճիհէթ րահաթ իտի իսէմտէ, սուրէթ ի շէտիտէտէ արանըլմագտա օլտուղըմը, վէ նէթի-ճէսինտէ պուլունտուղըմ խանէլէրէ գարար իրաւ էտէճէյիմի կէօրէրէք ֆիրարըմըն պէշինճի կիւնիւ խօտ պէ խօտ կիտիպ էսքի միւսաֆիրխանէի ումուսիլէ տախիլ օլտում: Վէ փօսթը երինէ օրայա սէրտիք: Նէ իսէ ուճուղ գուրթուլտըգ:

Եօզղատտա մահպուսիյէթիմ էսնաւընտա, կէմէլէքլի իւչ վէ կիւրիւնլի իքի քիմնէլէր, պու սօնրաքիլէրտէն պիրիսի ճէնօ նամըլյա մէվթէն տիկէրլէրի մէճրուհէն հապսխանէյէ կէթիրիլտիլէր, պունլար էրմէնի գօթիթէլէրի տէյիւ գօվալանուպ եօլտա գաթլ վէ ճէրհ էտիլմիշլէր տիր: (Տեվամի)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Բժիշկի՞ն կը կարօտիս, բնաւ մի յուսահատիր հիւանդութեանդ համար, որչափ ալ ախտդ հինցած ըլլայ ու բուժումը դժուարացած, յիշէ թէ Պոլսոյ նոր նամակատան դիմաց ֆէրուհ պէյ խան թիւ 5 Տօքթ. Թապիպիանի բժշկական մասնասնեակին մէջ ամէնազգի հիւանդութիւններ կը դարմանուին մեծ հմտութեամբ, դիւրութեամբ և գոհացուցիչ կերպով: Ես յուսահատ և տխուր գացի, բայց գոհ սրտով վերադարձայ, և երբ դեղերը գործածեցի ցաւիս դարմանը գտայ: Ուզեցի որ ուրիշներ ալ երջանկանան: Եթէ հիւանդ ես, ո՛վ բարեկամ, գնա՛ գտիր այդ բժիշկը, կէսօրէ ետքը միեւնոյն տեղը: Եթէ աղքատ հիւանդ մըն ես գնա Ուրբաթ օր կէս օրէ վերջ ձրի կը դարմանուիս, ու երբ դու ալ ախտիդ դարմանը գտնես գիտեմ թէ պիտի փութաս չընորհակալիքդ յայտնելու յիշեալ բժիշկին ինչպէս՝ նաև ինծի որ ախտէդ բժշկուելու տեղը ցոյց տուի:

Ս. Ի.

ՊՈԼՍՈՑ ՄՕՏ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ. — Դրախտի Յրդ թիւն է որ կը խրկուի, տակաւին և ոչ մէկ տեղէն դրամ հասած չէ. եթէ չծախուեցան, ինչո՞ւ իմաց չի տրուիր, եթէ ծախուեցան, ինչո՞ւ դրամ չի խրկուիր: Ասիկա անհատական ձեռնարկ մըն է, մեծ ծախսերու ենթարկուած Մինչեւ որ այս երեք թիւերուն հաշիւները չհասնին, Կրդ թիւը կարելի պիտի չըլլայ փութին յանձնել:

ԴԵՂԱՐԱՆ «ԱՏԱՆԱ»

ՅԱԿՈԲ Յ. ԹԵՐԶԵԱՆ

ԳՈՒՄ-ԳԱՓՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Ատանայի .սղեռայի ջաղդին մէջ մեծ կորուստներ տալով հազիւ ազատած գեղազորք Յակոբ էֆ. Թէրզեան համակիրներու աջակցութեամբ բոլորովին նոր գեղարան մը հիմնած է Գում Գափուի մէջ «Դեղարան Ատանա» անունով. Պալի փաշա զառ ի վարին ստորադր:

Դեղերն ամբողջապէս թարմ և լաւագոյն տեսակէն ըլլալով, մանաւանդ միշտ քիչ շահով շատ գործ ունենալու սկզբունքովը կարճ ժամանակի մը մէջ հանրութեան համակրութեանն ու վստահութեանը արժանացած է:

Դեղագործ Թէրզեան էֆ. ի անխոնջ ջանքերովն և թէ գիշեր ցօրեկ ամէն վայրկեան իր գեղարանին մէջ ներկայ գտնուելով բոլոր դեղերն անձամբ իր ձեռքովն պատրաստելովը յանձնարարելի է ամէն բժախնդիր հիւանդներու և հիւանդի տէրերու:

Ամէն գեղերու պէս Զկսն իւրի ամենամաքուր թարմ տեսակը կը վաճառուի Թէրզեան էֆ. ի քով միշտ քիչ շահով:

ՏՕԲԹ, ՏԻԳՐԱՆ ԷՖ. ՆԷՔԻՄԵԱՆ ՍԻՒՆԻ

ՄԱՍՆԱԳԷՏ ԱԶՔԻ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ամերիկեան համալսարանէ մը շրջանաւարտ այս ծանօթ բժիշկը, ժամանակ մը Ամերիկայի հիւանդանոցի մը մէջ պաշտօնավարելէ ետք, Թուրքիա եկած, իր արհեստը յաջողութեամբ կիրարկած, բայց երկար ժամանակ Հռոգոս քաղաքը մնացած էր բռնապետութեան շրջանին: Հիմակ Պոյաճը գիւղ հաստատուած կը գործանէ ամէն տեսակ հիւանդութիւն, ի մասնաւորի աչքի տկարութիւններ: Հեռագրով կրնայ կանչուիլ ամէն տեղ: Վկայեալ աղքատները ձրի:

ՏՕՔԹ Մ, ՍՈՒՃԵԱՆ,

ՄԱՍՆԱԳԷՏ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ԾՆՆԴԱՄԻՋԱԿԱՆ

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

Կը դարմանէ ամենաարագ և ամենավերջին դիւրու-
թեամբ Ֆրանկախտը (Ֆրէնկի) և ջերմամիզութիւնը (Պէլ
սօդուգլուղը), Միզարգելութիւնը, Երազափորձութիւնը, Երի-
կամունքի (պէօպրէկի) հիւանդութիւնը, հին և նոր ստա-
մոքսի տկարութիւնները: Այն օր առտուընէ մինչեւ իրի-
կուն կը գտնուի Պաղչէգափու Մինասեան Դեղարան Պին
Պիր Չէշիտ վաճառատան դէմ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ Վ.ԱԽՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ԿԷՏԻՔ ՓԱՇԱ—ՊԱԼԻ ՓԱՇԱ ԵՕԳՈՒՇՈՒ, Կ. ՊՈԼԻՍ

Այս դեղարանը որ սուղ ժամանակի մը մէջ հասարա-
կութեան վստահութեանը արժանացաւ, մասնաւորապէս
դեղերուն խիստ թարմութեանը, դեղագիրներու ճշգրիտ
պատրաստութեանը, և ցոյց տուած ուղղամտութեանը հա-
մար, այս անգամ իր բոլոր յաճախորդները գոհ ձգելու նը-
պատակով և յարգոյ հասարակութեան քաջալերութեանը
վրայ, ինչպէս ուրիշ տարիներ, նոյնպէս այս տարի նորվե-
կիայէն մեծաքանակ բերել տուած է

ՄՕՐԻԻԻ ԱՆԱՐԱՏ ՉԿԱՆ ԻԻՂԸ

ՈՐ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԻՄՆԱԳԷՏՆԵՐԷՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ
ԲԺԻՇԿՆԵՐԷՆ ԳՆՆՈՒԱԾ ՈՒ ԱՆԵԱՐԳԱՆ ԸԼԼՈՒԸ ՎԱ-
ԻՆԵՐԱՑՈՒԱԾ Է:

ՄՕՐԻԻԻ ձկան իւղը կը ծախուի մեծ ու փոքր քանա-
կութեամբ մասնաւոր շիշերու մէջ: Կէտիք Փաշա—Պալի
Փաշա դեղարանը կը գտնուին նաեւ ամէն տեսակէ մեծ քա-
նակութեամբ քօնեաքներ, օ տը քօլօննիւ և անգլիական ու
գաղիական դեղերու մթերք մը:

ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ դեղարանը, յաճախորդներուն
փափաքին համաձայն, ի դիւրութիւն, կը հրաւիրուի ուզուած
բժիշկը: Այս դեղարանը կը յաճախեն արդէն փորձ ու կարող
բժիշկներ, որոնք դեղարանին յարակից մասնասէնեակին
մէջ կը դարմանեն ամէն տեսակ հիւանդութիւններ: Բշ. և
Եշ. օրերը, կէս օրէ վերջ ձրի դարմանում:

Դ Ե Ղ Ա Ր Ա Ն Ը Ո Ւ Ն Ի

Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Ս Պ Ա Ս